ԱՊՐԻԼԻ 13–19-Ը
Մոսիա 1–3

Բենիամին թագավորն ինչո՞ւ է հրավիրում մեզ դառնալ ինչպես երեխա:



Դառնալով ինչպես երեխա, մենք մոտենում ենք Քրիստոսին և զգում ենք Նրա Քավության միջոցով Սուրբ դառնալու ուրախությունը:

Դուք երբևէ զգացե՞լ եք, որ ձեր սիրտը փափկել է, երբ տեսել եք որևէ երեխայի: Երեխաները հաճախ խոսում են անկեղծորեն և սիրո ու հավատի պարզ հայտարարություններ են ասում: Փրկիչն ուսուցանել է. «Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնէ, նա է մեծ երկնքի արքայության մեջ» (Մատթեոս 18.4):

Գուցե սա էր պատճառներից մեկը, որ Բենիամին թագավորը խնդրեց իր մարդկանց հանել իրենց միջից բնական մարդուն և դառնալ ինչպես երեխա (տես Մոսիա 3.19):

Ինչպե՞ս ենք դառնում երեխայի նման: Կարդացեք Մոսիա 3.19-ը և բաց թողնված տողերում լրացրեք Բենիամին թագավորի խոսքերը, որոնցով նա նկարագրում էր մարդուն, որը նման է երեխայի:

1.____________________

2.____________________

3.____________________

4.____________________

5.____________________

6.____________________

ՔՆՆԱՐԿՈՒՄ
Մորմոնի Գրքի ձեր սիրելի հերոսների մեջ գտեք երեխայի հատկանիշներ: Ինչպե՞ս կարող եք հետևել նրանց օրինակին:

ՇԱԲԱԹ
3

ՆԿԱՐԸ՝ ԲՐԱՅԱՆ ԲԻՉԻ
ՁԵՐ ԱՍՏԾՈ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՎԱԼԹԵՐ ՌԵՅՆ